

արհեստական կերպով ներարկած գազի շնորհիւ, որ ճնշում է թութի մակերևոյթը, Պրոֆ. Forlantineը իր միջոցը փորձել է Պաւիայի համալսարանի կլինիկում հիւանդների վրայ և տեսել է, որ ամենատանյալի դէպքերում նոյն իսկ թոքախտը բժշկուել է և միայն 60% մահացութեան դէպքէ տեղի ունեցել: Սղմելու միջոցով թոքերը բժշկելու գաղափարը վաղուց արդէն գոյութիւն ունէր, բայց իրականացել է միայն Forlantine-ի ջանքերի շնորհիւ:

ՆՈՐ ՄԻՋՈՑ ԹՈՔԱԽՏԻ ԴԵՄ

Յայտնի դոքտոր Դուայէնը հաղորդում է, որ նա բաց է արել հիւանդանոց 250 հիւանդների համար, ուր գործադրում է իր նոր գտած դեղը թոքախտի համար, որ բաղկացած է երկու զանազան լուծուածքների կաշուի տակի սրսկումից, մէկը զառիկային գործարանաւոր աղի և երկրորդը միկոլիդինի: Այս երկու հեղուկները, Դուայէնի ասելով, գրգռում են դէպի աւելի ուժեղ գործունէութիւն ֆագոցիտներին, այն է մարմինը պաշտպանող Միչնիկովի ցանցերին: Այս լուծուածքներից յետոյ Դուայէնը ներարկում է քիչ քանակութեամբ տուբէրկուլին, որ 1890 թուին գտաւ գերմանացի գիտնական Կօխը: Շատերը կյիշեն այն արտասովոր աղմուկը, որ բարձրացրեց Կօխի գիւտը և ապա հիսսթափութիւն առաջ բերեց: Տուբէրկուլինը, թոքախտը չբժշկելով, մինչև անգամ թոյլ չափով ծանր բարդութիւններ առաջ բերեց: Դուայէնի կարծիքով, այս թոյնը կարելի է խիստ օգտակար պատուաստի վերածել ֆագոցիտները վաղօրօք պատրաստելու ժամանակ, որին և ծառայում են երկու լուծուածքները:

Օր. Ն. Ազաճեանց